

գոյներ, ճոխութիւն եւ անգործնական նրբութիւն: Մինչ արեւելեան գորգերը բնիկներուն համար կը շինուէին որոշ եւ կարեւոր գործածութեանց համար, նրբութեան չափ անոր տոկունութիւնն ալ կարեւոր ըլլալով, գոյները պայծառ եւ զօրաւոր: Եւրոպական այդպիսի ազդեցութիւն կը դանենք նաեւ ԺԸ դարուն վերջերը եւ ԺԹ դարուն սկիզբները շինուած կարգ մը Հայ-Պարսիկ գորգերու մէջ (Ղարաբաղի, Գարատաղի, Լօռ կոչուած գորգերու մէջ) երբ Եւրոպացի պետական ներկայացուցիչներու եռուզեռ մը կար Պարսկաստան: Այդ գորգերը, որոնցմէ «Լօռ» կոչուածները մինչեւ վերջերս կը շինուէին, գծաձեւերու եւ նոյնիսկ գոյներու զարմանալի նմանութիւն մը ունէին եւ ունին Փրանսական «Օպիւսոն» կոչուած գորգերուն հետ: Իսկ կեղծ մետաքսով եւ ոսկեզօյն մետաղաթելով հիւսուած «Հերեքէի» գորգերը կ'արտադրուէին պարզապէս Եւրոպացի կամ Ամերիկացի զբօսաշրջիկներու համար, ալյապէս բոյրօլիին անպէտ եւ անարժէք, երեւութապէս մեծ նմանութիւն ունենալով «Բոլոնէզ» գորգերու գոյնին եւ հիւսուածքին հետ:

Դարձեալ հաւանական է որ «Բոլոնէզ» գորգերու մեծ մասը Պարսկաստանէն դալէ գատ Լեհաստանի մէջ ալ անոնք՝ քիչ թիւով հիւսուէին հոն հաստատուած մեծաղանդուած հայ գաղութին մէջ: Պարսիկները եւ Թուրքերը, ինչպէս այժմ, այն ատեն ալ հեռաւոր եւ անհաստաք իստոնեայ երկիրներ գաղթելու եւ բնակելու հակամէտ չէին երբեք: Որով տարակոյս չկայ թէ Լեհաստան կամ այլուր յիշուած Պարսիկ կամ Թուրք վաճառականը, արհեստաւորը հարիւրին իննըսունըինը համեմատութեամբ հայ էր: Շահ Ապպաս ԺԷ դարուն սկիզբը խիստ կերպով արդիւրած էր արհեստաւորներուն երկրէն հեռանալը, ասկէ գատ անոնք լաւագոյն կերպով կը վարձատրուէին, որով բնական է որ մեկնելու պատճառ մը չունէին, մինչ հայ արհեստաւորը զուրկ էր հարկ եղած պաշտպանութենէն եւ աւելի հակամէտ հեռանալու, իր անձնական եւ կրօնական ազատութեան համար:

Անդլիացի ուղեգիր վաճառական մը, Ճօն Նիւպէրի, կը վկայէ որ 1582ին Եաշի (այժմ Ռումանիա) մաքսատունը «Իւրաքանչիւր հարիւր ասրեր արժող գորգին տասներկու ասրեր մաքս կ'առնէր»⁽²⁴⁾: Այս գորգերը Պարսկաստանէն կամ Թուրքիայէն կու գային հայ վաճառականներու միջոցաւ:

«1725ին Պարսկաստանի հայերը համաձայնում են Լէօպոլի հայերի հետ Ասիայից ապրանքները Լայպցիկ փոխադրելու համար: Ստիւդիենիցի հայերը 17րդ դարի առաջին կէսերից շատ հարուստ էին եւ ապրում էին Արեւելքի հետ կառարած առեւտուրով:

Նրանք տարին երկու կարաւան էին կազմակերպում. Մայիսին եւ Սեպտեմբերի վերջին, եւ երբ այս կարաւանները վերադառնում էին

(24) Purchas his Pilgremes. Vol. VIII, p. 449-48.